

Կիլիկիոյ մէջ ալ գործել սկսաւ, Ատանայի եւ Հալէպի դպրոցներն իւր տեսչութեան ներքեւ առնելով:

Քաղցր է մեզ հաւատալ, որ սոյն ընկերութեան Գործադիր Ժողովոյ անդամներն յաջողած են բառնալ այն անհամաձայնութիւնն, որ ի սկզբան կտիրէր իրենց մէջ:

22 Հոկտեմբեր

Զրոյց կատարուի, թէ Սոյ Կաթողիկոսն Բ. Դրան հրամանաւ երեք վարդապետներու հետ Կ. Պօլիս կբերուի հսկողութեան տակ:

Լրագիրներուն ամեն խօսքին հաւտալն՝ է...:

Այսօր ալ չկրցի բան մը հասկնալ Վայելքէն...

23 Հոկտեմբեր

Լրագիրները կծանուցանեն, թէ Կարնոյ եւ Վանայ գաւառներու մէջ ըլլալիք բարենորոգումներուն երկրորդ *կօմիտէ* Աղաբէկեան Սարգիս Էֆէնտին Պօլիս եկած է:

Աս ալ սուտ լուրերուն կարգն անցունելու է:

Եթէ եկած լինէր՝ եղած բարենորոգումներուն վրայ կրնայինք լուրեր առնել:

24 Հոկտեմբեր

Այսօր երեսփոխանական ժողովն գումարուեցաւ Ղալաթիա:

Երեսփոխանները բաւական խօսեցան իրարու հետ, բայց մեծամասնութիւն գոյացած չըլլալով՝ որոշումները յաջորդ նստին թողուեցան:

–Ինչո՞ւ խօսեցան ուրեմն, քանի որ որոշելու համար մեծամասնութիւն չունէին:

–Ժամանակ անցունելու համար...

25 Հոկտեմբեր

Կայսերական կառավարութիւնը *Խուրպան պայրամին* ծախքերուն համար չորս - հինգ հազար ոսկոյ փոխառութիւն մը ընել կփափաքի Ղալաթիոյ սեղանաւորներէն:

Եթէ այս փոխառութիւնը չյաջողի՝ *պայրամն* քանի մը շաբաթ յետ պիտի ձգուի կ'ըսեն: